

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

26 փետրվարի 2001 թ.  
ք. Երևան

N 02/207

### Հ Ր Ա Մ Ա Ն

#### ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 86-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային ձևակերպումների ժամանակ մաքսային արժեքի մանրամասնությունների հայտարարագրումը ապահովելու նպատակով

#### Հրամայում են՝

1. Հաստատել «Մաքսային արժեքի մանրամասնությունների հայտարարագրի լրացման» կարգը (կցվում է):
2. Հաստատել մաքսային արժեքի մանրամասնությունների հայտարարագրի ՄՀ.1 և ՄՀ.2 ձևերը (կցվում են):

Նախարար՝

Ա. Մանուկյան

«Հաստատում են»  
ՀՀ պետական եկամուտների նախարար՝  
Ա. Մանուկյան  
26.02.2001 թ.

### Կ Ա Ր Գ

#### ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ

##### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Մաքսային արժեքի մանրամասնությունների հայտարարագրի ՄՀ.1 և ՄՀ.2 ձևերը կիրառվում են ՀՀ մաքսային տարածք ներմուծվող ապրանքների բեռնամաքսային հայտարարագրով հայտարարագրման ժամանակ:

1.2. Մաքսային արժեքի մանրամասնությունների հայտարարագրերը (այսուհետև ՄՀ.1 և ՄՀ.2) հանդիսանում են մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթեր, ներկայացվում են բեռնամաքսային հայտարարագրի (ԲՄՀ) հետ և համարակալվում են ԲՄՀ-ի գրանցման համարով: ՄՀ.1 և ՄՀ.2 ձևերը ներկայացվում են հայտարարատուի կողմից այն մաքսային մարմնին, որը կատարում է ապրանքների մաքսային ձևակերպումը:

1.2.1. ՄՀ.1 ձևը կարող է լրացվել բոլոր այն դեպքերում, երբ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է հայտարարատուի կողմից, ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդով (1-ին մեթոդ), ընդ որում ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերի ներկայացումից հետո մաքսային մարմինները 2 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում կամ մերժում են մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների՝ սույն կետում նշված մեթոդով հաշվարկված մաքսային արժեքը: Մաքսային մարմինների կողմից սույն կետով սահմանված ժամկետում նշված մեթոդով հաշվարկված մաքսային արժեքի ընդունման կամ մերժման վերաբերյալ համապատասխան որոշում չկայացնելու դեպքում հայտարարատուի կողմից ներկայացված մաքսային արժեքը համարվում է ընդունված:

*(1.2.1 կետը լրաց. 28.02.11 N 75-Ն, փոփ. 28.02.12 N 60-Ն)*

1.2.2. ՄՀ.2 ձևի լրացումը պարտադիր չէ: ՄՀ.2 ձևը հայտարարատուի կողմից լրացվում է, ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը մաքսային մարմինների կողմից ՀՀ մաքսային օրենսգրքի 89-93 հոդվածներին համապատասխան որոշելու դեպքում (2-ից 6-րդ մեթոդներ), երբ հայտարարատուն տիրապետում է վերոհիշյալ մեթոդներով մաքսային արժեքի որոշմանը վերաբերող համապատասխան տեղեկատվության:

Եթե հայտարարատուն չի տիրապետում և չի ներկայացնում 2-6-րդ մեթոդներով մաքսային արժեքի որոշմանը վերաբերող համապատասխան տեղեկատվություն, ապա նա այդ մասին գրավոր տեղեկացնում է մաքսային ձևակերպումներն իրականացնող պաշտոնատար անձին՝ հաստատելով այն ստորագրությամբ և (կամ) կնիքով:

1.2.3. Հայտարարատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում բոլոր այն տեղեկությունների հավաստիության համար, որոնք նշված են ՄՀ.1 և ՄՀ.2 ձևերում և այն փաստաթղթերում, որոնք ներկայացվում են մաքսային արժեքը որոշելու համար:

1.3. Հայտարարատուն ինքնուրույն է լրացնում մաքսային արժեքի մանրամասնությունների հայտարարագրի (ՄՀ.1 և ՄՀ.2) բոլոր սյունակները դրանց լրացման սույն կարգի պահանջներին համապատասխան, ղեկավարվելով ՀՀ մաքսային օրենսգրքի 4-րդ բաժնի դրույթներով՝ գծիկներ դնելով բոլոր այն սյունակներում, որոնց լրացումը կախված գործարքի և (կամ) մատակարարման պայմաններից անհրաժեշտ չէ:

1.4. Մաքսային մարմնի պաշտոնատար անձը, որն իրականացնում է ՄՀ.1 և ՄՀ.2 ձևերի ձևակերպումը և ստուգումը, իրավունք չունի սեփական նախաձեռնությամբ, հանձնարարականով կամ հայտարարատուի խնդրանքով փոփոխություններ, ավելացումներ և ուղղումներ կատարել հայտարարատուի կողմից լրացված սյունակներում, բացառությամբ սույն կարգի համաձայն իր իրավասությունների սահմաններում կատարվող նշումների:

Անհրաժեշտության դեպքում, մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից համապատասխան նշումները կամ հաշվարկները կատարվում են «Մաքսային նշումների համար» սյունակում կամ ՄՀ.1 և ՄՀ.2 ձևերի դարձերեսին, նշելով այն սյունակի համարը, որին վերաբերում է լրացուցիչ գրառումը: Համապատասխան սյունակում կատարվում է «Տես դարձերեսը» նշումը: Մաքսային մարմնի պաշտոնատար անձի կատարած բոլոր նշումները փակվում է շրջանակով, հաստատվում է ստորագրությամբ և անձնական կնիքով:

1.5. ՄՀ ձևերը լրացվում են երեք օրինակից, որոնցից.

- առաջին օրինակը մնում է մաքսային մարմնում,
- երկրորդ օրինակը տրվում է հայտարարատուին,
- երրորդ օրինակը ԲՄՀ-ի համապատասխան օրինակի հետ ուղարկվում է վերադաս մաքսային մարմին:

1.6. ՄՀ.1 և ՄՀ.2 ձևերը բաղկացած են երկու հիմնական և լրացուցիչ թերթերից, որոնցում լրացվում են տեղեկություններ մաքսային արժեքի և դրա բաղկացուցիչների վերաբերյալ:

ՄՀ.1 և ՄՀ.2 ձևերի հիմնական թերթերում լրացվում են մինչև երեք անուն ապրանքների համար տեղեկություններ: Եթե խմբաքանակում առկա են երեք անունից ավելի ապրանքներ, ապա օգտագործվում են լրացուցիչ թերթեր, որոնցից յուրաքանչյուրի վրա կարելի է լրացնել մինչև ութ անուն ապրանքատեսակների վերաբերյալ տվյալներ:

Լրացուցիչ թերթերի համարակալումը սկսվում է երրորդ համարից:

Լրացուցիչ թերթերը կարող են օգտագործվել միայն այն դեպքում, երբ բոլոր տվյալները, որոնք հայտարարագրված են ՄՀ.1 և ՄՀ.2 ձևերի հիմնական թերթերի առաջին էջում, ամբողջությամբ վերաբերվում են նաև լրացուցիչ թերթերում նշված ապրանքներին:

1.7. ՄՀ.1 և ՄՀ.2 ձևերում ջնջումներ չպետք է լինեն:

Հայտարարատուի հայտարարագրած տեղեկությունների ուղղումները կատարվում են միայն հայտարարատուի կողմից: Յուրաքանչյուր ուղղում պետք է հաստատվի հայտարարատուի ստորագրությամբ:

Մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից լրացվող սյունակներում ուղղումները կատարվում են միայն մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից և հաստատվում անձնական կնիքով:

Ուղղումները կատարվում են գիծ քաշելով սխալ տեղեկությունների վրա (այնպես, որ այն ընթեռնելի լինի) և գրելով ճիշտ տվյալները:

ՄՀ.1 և ՄՀ.2 ձևերը, որոնք լրացված են ջնջումներով և հայտարարատուի կողմից չհաստատված ուղղումներով, ենթակա չեն ընդունման:

Մաքսային արժեքի մանրամասնությունների հայտարարագրի յուրաքանչյուր թերթ (ՄՀ.1 և ՄՀ.2 ձև) պարտադիր ստորագրվում և (կամ) կնքվում է հայտարարատուի կողմից:

## **2. ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ԸՍՏ ՄՀ.1 ՁԵՎԻ**

2.1. Ըստ ՄՀ.1 ձևի մաքսային արժեքի մանրամասնությունների հայտարարագիրը լրացվում է այն դեպքերում, երբ ՀՀ տարածք ապրանքների ներմուծումն իրականացվում է առ ու վաճառքի արժեքային գործարքների շրջանակներում և այդ ապրանքների մաքսային արժեքի որոշումը կատարվում է 1-ին մեթոդի համաձայն:

2.2. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից լրացվում է «մաքսային նշումների համար» դաշտը՝ ՄՀ.1-ի հիմնական և լրացուցիչ թերթերի վրա:

2.3. Հայտարարատուի կողմից սյունակների լրացման կարգը.

Սյունակ 1. «Վաճառող»

Նշվում է ապրանքը վաճառող անձի անվանումը և գտնվելու վայրը, եթե վաճառողը կազմակերպություն է, կամ՝ անունը, ազգանունը և բնակության վայրը, եթե վաճառողը ֆիզիկական անձ է:

Սյունակ 2ա. «Գնորդ»

Նշվում է ապրանքը գնող անձի անվանումը և գտնվելու վայրը, եթե գնորդը կազմակերպություն է, կամ՝ անունը, ազգանունը և բնակության վայրը, եթե գնորդը ֆիզիկական անձ է:

Սյունակ 2բ. «Հայտարարատու»

Նշվում է ապրանքը հայտարարագրող և մաքսային մարմնին ներկայացնող անձի անվանումը և գտնվելու վայրը, եթե հայտարարատուն կազմակերպություն է, կամ՝

անունը, ազգանունը և բնակության վայրը, եթե հայտարարատուն ֆիզիկական անձ է: Եթե հայտարարատուն գնորդն է կատարվում է հղում 2ա սյունակին:

Սյունակ 3. «Մատակարարման պայմանները»

Նշվում է մատակարարման պայմանների կարճ տառային անվանումը («Ինկոտերմս»-ի գործող մեկնաբանությունների համաձայն) և նշանակման կետի անվանումը: Օրինակ. CIP-Երևան, EXW-Ամստերդամ, FOB-Բաթումի և այլն:

Սյունակ 4. «Հաշիվ ապրանքագրի համարը և ամսաթիվը»

Նշվում է վաճառողի կողմից գնորդին ներկայացված հաշիվ-ապրանքագրի համարը և ամսաթիվը:

Սյունակ 5ա. «Պայմանագրի համարը և ամսաթիվը»

Նշվում է ապրանքի մատակարարման պայմանագրի կամ դրան փոխարինող այլ փաստաթղթի համարը և ամսաթիվը:

Սյունակ 5բ. «Ապրանքի ծագման երկրի սերտիֆիկատի համարը և ամսաթիվը»

Նշվում է ապրանքի ծագման երկրի սերտիֆիկատի համարը և ամսաթիվը:

Սյունակ 5գ. «Արտահանման երկրի ԲՄՀ-ի համարը և ամսաթիվը»

Նշվում է արտահանման երկրի մաքսային ծառայության կողմից վավերացված հայտարարագրի համարը և ամսաթիվը:

Սյունակ 6.

Նշվում է գնորդի կողմից կատարված նախորդ գործարքի հայտարարագրի համարը այն դեպքում, եթե մաքսային մարմնի կողմից դիտողություններ են կատարվել 7-9 կետերի վերաբերյալ: Տրվում է ապրանքների մաքսային ձևակերպումը կատարած մաքսային մարմնի անվանումը և դիտողությունների բովանդակությունը:

Սյունակներ 7ա, 7բ.

(X) նշանով նշվում է ճիշտ պատասխանը («ԱՅՈ» կամ «ՈՉ»):

Սյունակ 7գ.

(X) նշանով նշվում է ճիշտ պատասխանը («ԱՅՈ» կամ «ՈՉ»):

«ԱՅՈ» պատասխանի դեպքում նշվում են մանրամասները:

Սյունակներ 8ա, 8բ.

(X) նշանով նշվում է ճիշտ պատասխանը («ԱՅՈ» կամ «ՈՉ»):

«ԱՅՈ» պատասխանի դեպքում նշվում են մանրամասները, օրինակ՝ ապրանքի հանդիպակաց մատակարարման պահանջի առկայությունը կամ գնորդի կողմից ինչ-որ ծառայությունների մատուցումը վաճառողին, որն ազդում է այդ գործարքի գնի վրա: Այդ պայմանների կամ սահմանափակումների արժեքային գնահատման հաշվարկը կատարվում է հայտարարագրի դարձերեսին, նշելով այն փաստաթղթերը, որոնց հիման վրա կատարվում են այդ հաշվարկները, իսկ համապատասխան գումարը նշվում է 11բ սյունակում որպես անուղղակի վճարում և հաշվի է առնվում մաքսային արժեքի որոշման ժամանակ, իսկ 8-րդ կետում նշվում է «Տես 11-րդ կետը» նշումը:

Սյունակ 9ա.

(X) նշանով նշվում է ճիշտ պատասխանը («ԱՅՈ» կամ «ՈՉ»):

«ԱՅՈ» պատասխանի դեպքում նշվում են ռոյալթիների և թույլտվությունների դիմաց վճարումներին վերաբերող մանրամասները, այսինքն ինչ տիպի վճարումներ են, ինչի համար են կատարվել և այլն: Վճարումները նշվում են այն դեպքում, երբ գնորդը պարտավոր է ուղղակի կամ անուղղակի ձևով վճարել վաճառողին առ ու վաճառքի գործարքի պայմաններին համապատասխան, եթե այդ վճարումները չեն մտցվել փաստորեն վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ և չեն մտել վաճառողի կողմից գնորդին ներկայացված հաշիվ-ապրանքագրի մեջ: Այդ վճարումների մեծությունը նշվում է 15-րդ սյունակում:

Սյունակ 9բ.

«ԱՅՈ» պատասխանի դեպքում 16 սյունակում նշվում է գնահատվող ապրանքների հետագա վաճառքի, օգտագործման կամ տնօրինման դիմաց գնորդի կողմից վաճառողին վճարվող գումարի չափը:

Սյունակ 10ա. «ՄՀ-1 ձևին կցված լրացուցիչ թերթերի քանակը»

Նշվում է ՄՀ-1 ձևին կցված լրացուցիչ թերթերի քանակը:

Սյունակ 10բ. «Վայրը և ամսաթիվը»

Նշվում է ՄՀ.1-ի լրացման վայրը և ամսաթիվը, 2բ սյունակում նշված անձի (կազմակերպության) կողմից ապրանքները հայտարարագրելու համար լիազորված անձի ազգանունը, պաշտոնը, հեռախոսի համարը, ինչպես նաև այդ անձի ստորագրությունը և հայտարարատուի կնիքը: Հայտարարատուի կնիքի բացակայության դեպքում պահանջվում է ըստ կարգի ձևակերպված վստահագիր կամ այլ փաստաթուղթ, որը հաստատում է տվյալ անձի լիազորությունները: Տվյալները պետք է համապատասխանեն ԲՄՀ-ում նշված նույնանման տվյալներին:

ՄՀ.1 ձևի երկրորդ թերթը

Տվյալ թերթը նախատեսված է 1-ին մեթոդով մաքսային արժեքի հաշվարկման համար: Երկրորդ թերթի վրա կարող են նշվել տվյալներ 3 տեսակ ապրանքների մասին:

### **Բաժին Ա. «Հաշվարկման հիմքը»**

Այս բաժնում նշվում են տվյալներ գնի մասին, որը փաստացի վճարվել կամ ենթակա է վճարման և հիմք է հանդիսանում ապրանքի մաքսային արժեքի սահմանման համար: Այն դեպքում, եթե կախված մատակարարման պայմաններից (սյունակ 3) և գործարքի այլ պայմաններից չեն պահանջվում այդ գնին լրացուցիչ ավելացումներ և հանումներ դրանից, ապա նշված գինը պետք է հավասար լինի ներմուծվող ապրանքների մաքսային արժեքին:

Սյունակ 11ա. «Գործարքի գինը»

Առաջին տողում նշվում է գործարքի փաստացի վճարված կամ վճարման ենթակա գինը՝ արտահայտված տվյալ գործարքի տարադրամով:

Սյունակ 11բ.

Այս սյունակում նշվում է փաստաթղթերով հաստատված անուղղակի վճարումների գումարը ՀՀ դրամով այն դեպքում, եթե այդ մասին նշված է 8բ սյունակում:

Սյունակ 12. «Ընդամենը դրամով»

Նշվում է 11ա և 11բ սյունակների գումարը դրամով:

### **Բաժին Բ. «Ա բաժնում չներառված լրացուցիչ ավելացումներ գործարքի գնին»**

Տվյալ բաժնում նշվում են գործարքի գնին արվող լրացուցիչ ավելացումները, որոնք հաստատված են համապատասխան փաստաթղթերով (պայմանագրեր, հաշիվներ, ապրանքատրանսպորտային բեռնագրեր, տրանսպորտային սակագների հիմքի վրա կատարված հաշվարկներ և այլն): 13-17 սյունակների տվյալները նշվում են դրամով: Եթե նշված ավելացումների ծախսերը գնորդի կողմից կատարվել են տարադրամով, ապա «Դ» բաժնում նշվում է վերահաշվարկի տվյալները:

Սյունակ 13. «Գնորդի ծախսերը»

Այստեղ նշվում են 11ա սյունակում չնշված և գործարքի գնի մեջ չմտած ծախսերը, այսինքն վաճառողի կողմից գնորդին ներկայացված հաշիվ-ապրանքագրի մեջ չմտցված գումարը, որը սակայն ծախսվել է գնահատվող ապրանքը մինչև ՀՀ սահման հասցնելու համար և վճարվել կամ ենթակա է վճարման գնորդի կողմից:

Սյունակ 13ա.

Նշվում են կոմիսիոն և այլ միջնորդական ծառայությունների դիմաց գնորդի կողմից կատարված ծախսերը (բացառությամբ գնման միջնորդավճարի), եթե դրանք չեն մտցվել գործարքի գնի մեջ:

Եթե ՄՀ.1 ձևը լրացվում է մեկ խմբաքանակի մեջ մտնող մի քանի անուն ապրանքների համար, ապա միջնորդական ծառայությունների վրա կատարված ծախսերը բաժանվում են յուրաքանչյուր անուն ապրանքի միջև՝ սյունակ 12-ում նշված դրանց արժեքների համեմատ: Սա կատարվում է այն դեպքում, եթե պայմանագիրը վերաբերում է բոլոր կամ տվյալ խմբաքանակի մի քանի ապրանքատեսակներին:

Սյունակ 13բ.

Նշվում են գործարքի գնի մեջ չմտած, գնորդի կողմից կատարված տարայավորման և փաթեթավորման ծախսերը:

Սյունակ 14.

Այս կետը լրացվում է ապրանքների արտադրության և մատակարարման նպատակով գնորդի կողմից մատակարարին անհատույց կամ մասնակի հատուցմամբ, ուղղակի կամ անուղղակի տրամադրված ապրանքների և ծառայությունների առկայության դեպքում և նշվում է 14ա-14դ կետերում:

Սյունակ 14ա.

Այս սյունակում նշվում են ապրանքների մեջ ներառված նյութերի, բաղադրամասերի և համանման այլ առարկաների արժեքը, որոնք գնորդի կողմից անհատույց կամ մասնակի հատուցմամբ, ուղղակի կամ անուղղակի տրամադրվել են մատակարարին:

Սյունակ 14բ.

Այս սյունակում նշվում են ապրանքների արտադրության մեջ օգտագործված գործիքների և համանման այլ առարկաների օգտագործման արժեքը, որոնք գնորդի կողմից անհատույց կամ մասնակի հատուցմամբ, ուղղակի կամ անուղղակի տրամադրվել են մատակարարին:

Սյունակ 14գ.

Այս սյունակում նշվում են արտադրության մեջ սպառված նյութերի արժեքը, որոնք գնորդի կողմից անհատույց կամ մասնակի հատուցմամբ, ուղղակի կամ անուղղակի տրամադրվել են մատակարարին:

Սյունակ 14դ.

Այս սյունակում նշվում են ապրանքների արտադրության համար անհրաժեշտ ճարտարագիտական, ձևավորման նախագծման և համանման այլ աշխատանքների արժեքը, որոնք գնորդի կողմից անհատույց կամ մասնակի հատուցմամբ, ուղղակի կամ անուղղակի տրամադրվել են մատակարարին:

Սյունակ 15.

Այս սյունակում նշվում են ռոյալթիների կամ թույլտվությունների դիմաց կատարված վճարումները, որոնք նշվել են 9-րդ սյունակի «ա» կետում:

Սյունակ 16.

Տվյալ սյունակում նշվում են գնահատվող ապրանքների հետագա վաճառքի, օգտագործման կամ տնօրինման դիմաց գնորդի կողմից վաճառողին վճարվող գումարը:

Սյունակ 17. «Տեղափոխման ծախսերը մինչև...»

Այս սյունակում նշվում են ապրանքների ներմուծման ժամանակ մինչև ՀՀ համապատասխան սահմանային կետ (մաքսային կետ) տեղափոխման համար կատարված ծախսերը:

Սյունակ 17ա.

Նշվում են մինչև ՀՀ մաքսային սահման ապրանքների տեղափոխման համար կատարված տրանսպորտային ծախսերը, եթե դրանք մատակարարման պայմանների համապատասխան չեն մտել գործարքի գնի մեջ: Այն դեպքում, երբ ՄՀ.1 ձևը լրացվում է

մի քանի անուն ապրանքների համար, ապա վերոհիշյալ ծախսերը բաժանվում են յուրաքանչյուր անուն ապրանքի հաշվով՝ դրանց քաշին համեմատ:

Սյունակ 17բ.

Նշվում են մինչև ՀՀ սահման կատարված բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման ծախսերը, եթե այդ գումարները չեն մտցվել գործարքի գնի մեջ, այլ վճարվել են առանձին: Այն դեպքում, երբ ՄՀ.1 ձևը լրացվում է մի քանի անուն ապրանքների համար, ապա ապրանքների բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման ծախսերը բաժանվում են յուրաքանչյուր անուն ապրանքի հաշվով՝ դրանց քաշին համեմատ:

Սյունակ 17գ.

Այս սյունակում նշվում են բեռի ապահովագրման համար կատարված ծախսերը, եթե այդ գումարները չեն մտցվել գործարքի գնի մեջ, այլ վճարվել են առանձին: Այն դեպքում, երբ ՄՀ.1 ձևը լրացվում է մի քանի անուն ապրանքների համար, ապա ապահովագրական ծախսերը բաժանվում են յուրաքանչյուր անուն ապրանքի հաշվով՝ դրանց արժեքին համեմատ:

Սյունակ 18.

Այս սյունակում նշվում է «Բ» բաժնի բոլոր սյունակների գումարը (13ա-17գ):

**Բաժին Գ. «Ա բաժնում ներառված հանման ենթակա գումարներ դրամով»**

Տվյալ բաժնում պետք է նշվեն գործարքի գնից հանման ենթակա այն ծախսերը, որոնք կատարվել են ՀՀ տարածք ապրանքների ներմուծումից հետո, ՀՀ սահմանից մինչև նշանակման վայրը իրականացրած գործողությունների արդյունքում, եթե առկա է ծախսերի փաստաթղթային հաստատումը:

Սյունակ 19.

Տվյալ սյունակում կարող են նշվել ՀՀ տարածք ներմուծումից հետո իրականացված տեխնիկական աջակցության, պահպանման, հավաքման, մոնտաժման և կառուցման վրա իրականացված ծախսերը, եթե գործարքով նախատեսված են այդ աշխատանքները և հաշիվ-ապրանքագրում առանձին տողով նշված են դրանց համապատասխան գումարները:

Սյունակ 20.

Այս սյունակում նշվում են ՀՀ սահմանից մինչև նշանակման վայրը հասցնելու ծախսերը, եթե կա այդ մասին նշում հաշիվ-ապրանքագրում:

Սյունակ 21.

Այս սյունակում նշվում են գործարքի գնի մեջ ներառված այն վճարումները, որոնք չեն մտնում մաքսային արժեքի մեջ:

Սյունակ 22. Այս սյունակը լրացվում է այն դեպքում, երբ գործարքի գնի մեջ ներառված են և մատակարարման պայմաններով նշված են ՀՀ-ում ապրանքների ներմուծման համար նախատեսված մաքսային և այլ վճարումները:

Սյունակ 23. Այստեղ նշվում է 19-21 սյունակներում նշված գումարների արդյունքը:

Սյունակ 24. Այս սյունակում նշվում է հայտարարված մաքսային արժեքը, հաշվարկված հետևյալ կերպ. սյ.24 = սյ.12 + սյ.18 - սյ.23

Դ դաշտ

Լրացվում է, երբ մաքսային արժեքի մեկ կամ մի քանի բաղկացուցիչ մասերը լրացված են տարադրամով (սյ.13-22): Նշվում է սյունակի համապատասխան համարը, տարադրամով վճարված գումարը, տարադրամի փոխարժեքը ԲՄՀ-ն և ՄՀ.1-ը գրանցելու օրվա դրությամբ:

«Մաքսային նշումների համար» դաշտը

ՄՀ.1 ձևի յուրաքանչյուր օրինակի լրացուցիչ և հիմնական թերթերի մաքսային նշումների համար դաշտում նշվում է ՄՀ.1-ի գրանցման համարը: Մաքսային արժեքի հայտարարագրումը հսկող մաքսային տեսուչը հայտարարագիրը ստուգելուց հետո կատարում է համապատասխան նշում, որը հաստատում է իր անձնական կնիքով և ստորագրությամբ:

### **3. ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՄԱՆՐԱՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ԸՍՏ ՄՀ.2 ՁԵՎԻ**

3.1. Ըստ ՄՀ.2 ձևի մաքսային արժեքի մանրամասնությունների հայտարարագիրը լրացվում է մաքսային արժեքը 2, 3, 4, 5, 6 մեթոդներով որոշելու համար, երբ 1-ին մեթոդի կիրառումը հնարավոր չէ:

3.2. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից լրացվում է «մաքսային նշումների համար» դաշտը՝ ՄՀ.2-ի հիմնական և լրացուցիչ թերթերի վրա:

3.3. Հայտարարատուի կողմից սյունակների լրացման կարգը.

#### Սյունակ 1. «Վաճառող»

Նշվում է ապրանքը վաճառող անձի անվանումը և գտնվելու վայրը, եթե վաճառողը կազմակերպություն է, կամ՝ անունը, ազգանունը և բնակության վայրը, եթե վաճառողը ֆիզիկական անձ է:

#### Սյունակ 2ա. «Գնորդ»

Նշվում է ապրանքը գնող անձի անվանումը և գտնվելու վայրը, եթե գնորդը կազմակերպություն է, կամ՝ անունը, ազգանունը և բնակության վայրը, եթե գնորդը ֆիզիկական անձ է:

#### Սյունակ 2բ. «Հայտարարատու»

Նշվում է ապրանքը հայտարարագրող և մաքսային մարմնին ներկայացնող անձի անվանումը և գտնվելու վայրը, եթե հայտարարատուն կազմակերպություն է, կամ՝ անունը, ազգանունը և բնակության վայրը, եթե հայտարարատուն ֆիզիկական անձ է: Եթե հայտարարատուն գնորդն է, կատարվում է հղում 2ա սյունակին:

#### Սյունակ 3. «Մատակարարման պայմանները»

Նշվում է մատակարարման պայմանների կարճ տառային անվանումը («Ինկոտերմս»-ի գործող մեկնաբանությունների համաձայն) և նշանակման կետի անվանումը: Օրինակ. CIP-Երևան, EXW-Ամստերդամ, FOB-Բաթումի և այլն:

#### Սյունակ 4. «Հաշիվ-ապրանքագրի կամ ապրանքի մատակարարման համար հիմք հանդիսացող այլ փաստաթղթի համարը և ամսաթիվը»

Նշվում է վաճառողի կողմից գնորդին ներկայացված հաշիվ-ապրանքագրի, պայմանագրի կամ ապրանքի մատակարարման համար հիմք հանդիսացող այլ փաստաթղթի համարը և ամսաթիվը:

#### Սյունակ 5.

Նշվում է տվյալ գնորդի կողմից կատարված նախորդ գործարքի հայտարարագրի համարը: Տրվում է ապրանքների մաքսային ձևակերպումը կատարած մաքսային մարմնի անվանումը:

#### Սյունակ 6.

(X) նշանով նշվում է այն մեթոդը, որի վերաբերյալ հայտարարատուն կարող է տեղեկատվություն տրամադրել մաքսային արժեքի հաշվարկման համար:

#### Սյունակ 7.

Այս սյունակում նշվում են հայտարարատուի կողմից օգտագործված տեղեկատվության աղբյուրները (փաստաթղթեր, հաշիվներ, պայմանագրեր և այլն):

#### Սյունակ 8 «Հավելյալ թերթերի քանակը»

Նշվում է ՄՀ-2 ձևին կցված լրացուցիչ թերթերի քանակը:



Սյունակ 10. «Վայրը և ամսաթիվը»

Նշվում է ՄՀ.2-ի լրացման վայրը և ամսաթիվը, 2բ սյունակում նշված կազմակերպության կողմից ապրանքները հայտարարագրելու համար լիազորված անձի ազգանունը, պաշտոնը, հեռախոսի համարը, ինչպես նաև այդ անձի ստորագրությունը և հայտարարատուի կնիքը: Հայտարարատուի կնիքի բացակայության դեպքում պահանջվում է ըստ կարգի ձևակերպված վստահագիր կամ այլ փաստաթուղթ, որը հաստատում է տվյալ անձի լիազորությունները: Տվյալները պետք է համապատասխանեն ԲՄՀ-ում նշված նույնանման տվյալներին:

ՄՀ.2 ձևի երկրորդ թերթը

Տվյալ թերթը նախատեսված է 2, 3, 4, 5, 6 մեթոդներով մաքսային արժեքի հաշվարկման համար: Երկրորդ թերթի վրա կարող են նշվել տվյալներ 3 տեսակ ապրանքների մասին: Յուրաքանչյուր թերթի վրա նշվում է ՄՀ.2 ձևի գրանցման համարը:

Քաժին Ա. «Հաշվարկման հիմքը» Սյունակներ 11ա, 11բ, 11գ

Կախված 6-րդ սյունակում ընտրված հաշվարկման մեթոդից պետք է լրացվի 11ա, 11բ, 11գ սյունակներից որևէ մեկը, որտեղ պետք է նշվեն 7-րդ սյունակում նշված աղբյուրների տվյալները արժեքի (գնի) այն սկզբնական մեծությամբ, որի հիման վրա պետք է կատարվեն հետագա հաշվարկները:

Քաժին Բ. «Գնի ճշգրտումներ (+ -) դրամով»

Տվյալ բաժնում նշվում են 11ա, 11բ, 11գ սյունակներում ցույց տրված գնի ճշգրտումները: Ճշգրտումները կարող են լինել (+) նշանով, եթե դրանք բարձրացնում են գինը, և (-) նշանով եթե իջեցնում են գինը:

Սյունակ 12.

Խմբաքանակի չափերի ճշգրտումների ժամանակ առաջին հերթին հաշվի են առնվում գնի նկատմամբ զեղչերը, որոնք տրամադրվում են վաճառողի կողմից՝ կախված գնվող ապրանքի խմբաքանակից: Ընդ որում քանակային զեղչը նշվում է այն դեպքերում, երբ պայմանագրում նշված է, որ ապրանքի գինը սահմանվում է վաճառողի կողմից այն սխեմային համապատասխան, որը հիմնված է վաճառվող ապրանքի քանակի վրա:

Սյունակ 13.

Կոմերցիոն պայմանների ճշգրտման ժամանակ հաշվի է առնվում համեմատվող ապրանքների մատակարարման պայմանների տարբերությունը (CIF, FOB, DAF և այլն), ինչպես նաև կոմերցիոն պայմաններում այլ տարբերությունները (օրինակ վաճառման տարբեր կոմերցիոն մակարդակները՝ մեծածախ, մանրածախ, միջնորդական օղակների քանակը և այլն):

Սյունակ 14.

Նշվում է ճշգրտումների ընդհանուր գումարը (+ -) նշաններով:

Սյունակ 15.

Նշվում է գործարքի գինը, որը հաշվարկված է ճշգրտումների արդյունքում, այսինքն 11ա, 11բ, 11գ, և 14 սյունակների արդյունքները: Այն դեպքերում, երբ 11բ և 11գ սյունակներում նշված է միավոր ապրանքի գինը, անհրաժեշտ է կատարել վերահաշվարկ ապրանքի ամբողջ խմբաքանակի համար:

Քաժին Գ. Լրացուցիչ ավելացումներ (+) և պահումներ(-)

Տվյալ բաժնի սյունակներում (սյ.16-սյ.23) նշվում են ինչպես տվյալները ծախսերի տարրերի մասին, որոնք չեն մտել գործարքի գնի մեջ, սակայն պետք է հաշվի առնվեն մաքսային արժեքի մեջ, այնպես էլ այն տարրերի մասին, որոնք հաշվի են առնվել ՀՀ

ներքին շուկայում ապրանքի վաճառքի գնի մեջ և ենթակա են հանման մաքսային արժեքից:

Հայտարարատուի կողմից լրացվում են (այ.16-այ.23) միայն այն սյունակները, որոնք համապատասխանում են նրա կողմից օգտագործված հաշվարկման մեթոդին:

Սյունակ 24.

Այս սյունակում նշվում է «Գ» բաժնի (այ.16-այ.23) արդյունքը (+) կամ (-) համապատասխան նշանով:

Սյունակ 25.

Այս սյունակում նշվում է հաշվարկված մաքսային արժեքը՝ հետևյալ կերպ. այ.25 = այ.15 + այ.24:

Ղ դաշտ

Լրացվում է, երբ մաքսային արժեքի մեկ կամ մի քանի բաղկացուցիչ մասերը լրացված են տարադրամով: Նշվում է սյունակի համապատասխան համարը, տարադրամով վճարված գումարը, տարադրամի փոխարժեքը ԲՄՀ-ն և ՄՀ.2-ը գրանցելու օրը:

«Մաքսային նշումների համար» դաշտը

ՄՀ.2 ձևի յուրաքանչյուր օրինակի հիմնական և լրացուցիչ թերթերի մաքսային նշումների համար դաշտում նշվում է ՄՀ.2-ի գրանցման համարը: Մաքսային արժեքի հայտարարագրումը հսկող մաքսային տեսուչը, հայտարարագիրը ստուգելուց հետո, կատարում է համապատասխան նշում, որը հաստատում է իր անձնական կնիքով և ստորագրությամբ:

*«Հաստատում եմ»*  
 ՀՀ պետական եկամուտների նախարար  
 \_\_\_\_\_ Ա. Մանուկյան  
 \_\_\_\_\_ 2001 թ.

**ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՄԱՆՐԱՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ**

*Ձև ՄՀ.1*

1. Վաճառող	Մեթոդ 1	Գրանցման համարը
2.(ա) Գնորդ	Մաքսային նշումների համար	
2.(բ) Հայտարարատու	Օրենսդրությամբ սահմանված կարգով, մաքսային մարմինները իրավասու են Ձեր մասին տեղեկություններ ստանալ որևէ երրորդ կազմակերպությունից, կամ տեղեկություններ հայտնել նրանց, որպեսզի ստուգվի դրանց ճշմարտացիությունը: Այդ երրորդ կազմակերպությունները կարող են լինել իրավապահ մարմինները, կամ այլ պետական կառույցներ:	
Ուշադրություն	3. Մատակարարման պայմանները	
ՀՀ օրենսդրության համաձայն հայտարարատուն պատասխանատվություն է կրում բոլոր այն տեղեկությունների համար, որոնք նշված են սույն ձևում և այն փաստաթղթերում, որոնք ներկայացված են նրա կողմից մաքսային արժեքը հաստատելու համար: Մաքսային ձևակերպման ընթացքում հայտարարատուն պարտավոր է ժամանակին մաքսային մարմին	4. Հաշիվ ապրանքագրի համարը և ամսաթիվը	
	5ա. Պայմանագրի համարը և ամսաթիվը	

ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ հայտարարված մաքսային արժեքը հաստատելու համար:	
5բ. Ապրանքի ծագման երկրի սերտիֆիկատի համարը և ամսաթիվը	5գ. Արտահանման երկրի ԲՄՀ-ի համարը և ամսաթիվը
6. 7-9 կետերի վերաբերյալ մաքսային մարմնի կողմից նախկինում կայացված որոշման համարը և ամսաթիվը	Պետք է նշել x նշանով
7. (ա) Գնորդը և վաճառողը փոխկապակցված են* (*), եթե ոչ անցնել 8-րդ կետին	<input type="checkbox"/> ԱՅՈ <input type="checkbox"/> ՈՉ
(բ) Փոխկապակցվածությունը ազդե՞լ է ներմուծվող ապրանքի գնի վրա	<input type="checkbox"/> ԱՅՈ <input type="checkbox"/> ՈՉ
(գ) Ներմուծվող ապրանքների գործարքի գինը մոտավորապես հավասար է՞ չփոխկապակցված կողմերի գործարքի գնին: Եթե «ԱՅՈ» նշեք մանրամասները	<input type="checkbox"/> ԱՅՈ <input type="checkbox"/> ՈՉ
8. (ա) Գնորդի համար կա՞ն արդյոք ապրանքի օգտագործման սահմանափակումներ բացառությամբ`	<input type="checkbox"/> ԱՅՈ <input type="checkbox"/> ՈՉ
- սահմանափակումների, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ, - աշխարհագրական սահմանափակումների, որտեղ ապրանքները կարող են վերավաճառվել	
(բ) Արդյո՞ք վաճառքը կամ վաճառքի գինը պայմանավորված է որևէ հանգամանքով, որի պատճառով մաքսային արժեքը հնարավոր չէ սահմանել` ելնելով ապրանքի արժեքից	<input type="checkbox"/> ԱՅՈ <input type="checkbox"/> ՈՉ
Համապատասխան դեպքում նշեք սահմանափակումների, պայմանների կամ հանգամանքների բնույթը Եթե կան պայմաններ, որոնց արժեքը հնարավոր է որոշել լրացրեք արժեքը 11(բ) կետում	
9. (ա) Նախատեսվա՞ծ են արդյոք ռոյալթիների կամ թույլտվությունների դիմաց վճարումներ, որոնք գնորդը ուղղակի կամ անուղղակի ձևով վճարում է վաճառողին որպես վաճառքի պայման	<input type="checkbox"/> ԱՅՈ <input type="checkbox"/> ՈՉ
(բ) Կա՞ արդյոք մի պայման, ըստ որի գնահատվող ապրանքների հետագա վաճառքի, օգտագործման կամ տնօրինման դիմաց գնորդը պետք է վճարի վաճառողին Եթե 9 (ա, բ) կետերում պատասխանը «ԱՅՈ» է, ապա նշեք մանրամասները, իսկ 15 և 16 կետերում նշեք համապատասխան գումարը	<input type="checkbox"/> ԱՅՈ <input type="checkbox"/> ՈՉ
(*) Անձինք հանդիսանում են փոխկապակցված, եթե` (ա) նրանք մեկը մյուսի ընկերությունում ծառայող կամ տնօրեն են. (բ) մեկը մյուսի գործատուն կամ աշխատակիցն են. (գ) որևէ երրորդ անձ հանդիսանում է միաժամանակ նրանցից յուրաքանչյուրի ձայնի իրավունքով բաժնետոմսերի առնվազն 5 տոկոսի սեփականատեր կամ հանդես է գալիս բաժնետոմսերի այդ քանակի նկատմամբ տիրապետման կամ օգտագործման օրինական լիազորությամբ. (դ) նրանցից մեկը որևէ կերպ կարող է ուղղորդել կամ սահմանափակել մյուսի գործունեությունը. (ե) որևէ երրորդ անձ որևէ կերպ կարող է ուղղորդել կամ սահմանափակել մյուսի գործունեությունը. (զ) միասին որևէ կերպ կարող են ուղղորդել կամ	10 (ա).Հավելյալ թերթերի քանակը 10 (բ) Վայրը.  Ամսաթիվ.  Ստորագրություն.

սահմանափակել որևէ երրորդ անձի գործունեությունը.  
(ը) նույն ընտանիքի անդամներն են:

թերթ 2

**Ձև ԱՀ.1**

Մաքսային նշումների համար		Ապրանք	Ապրանք	Ապրանք
		ի N	ի N	ի N
Ա. Հաշվարկման հիմք	11(ա) Գործարքի գինը ՀԱՇԻՎ ԱՊՐԱՆՔԱԳՐՈՒՄ ՆՇՎԱԾ ՏԱՐԱԴՐԱՄՈՎ (գինը, որը ենթակա է վճարման)..... (բ) Անուղղակի վճարումներ - տես 8(բ) կետը..... (Փոխարժեքը.....)			
	12. Ընդամենը ՀՀ ԴՐԱՄՈՎ			
Բ. Ա-ում չնշված ծախսեր, որոնք ենթակա են գումարման (*)	13. Գնորդի ծախսերը (ա) Կոմիսիոն և միջնորդային ծախսեր՝ բացառությամբ գնման կոմիսիոն և միջնորդային ծախսերի..... .... (բ) Կոնտեյներներ և փաթեթավորում.....			
	14. Ապրանքների արտադրության և մատակարարման նպատակով գնորդի կողմից մատակարարին անհատույց կամ մասնակի հատուցմամբ ուղղակի կամ անուղղակի տրամադրված ապրանքներ և ծառայություններ՝ (ա) ապրանքների մեջ ներառված նյութերի, բաղադրամասերի և համանման այլ առարկաների արժեքը..... (բ) ապրանքների արտադրության մեջ օգտագործված գործիքների և համանման այլ առարկաների օգտագործման արժեքը..... (գ) արտադրության մեջ սպառված նյութերի արժեքը..... (դ) ապրանքների արտադրության համար անհրաժեշտ ճարտարագիտական ձևավորման նախագծման և համանման այլ աշխատանքների արժեքը.....			
	15. Ռոյալթիների և թույլտվությունների դիմաց վճարումներ-տես 9ա կետը.....			
	16. Գնահատվող ապրանքների հետագա վաճառքի, օգտագործման կամ տնօրինման դիմաց գնորդի կողմից վաճառողին վճարվող գամարը-տես 9բ կետը.....			
	17. Տեղափոխման ծախսերը մինչև  <div style="text-align: right;">(ներմուծման վայրը)</div> ա) Տրանսպորտային ծախսեր..... բ) Բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման			

	ծախսեր..... գ) Ապահովագրական ծախսեր..... 18 Բ-ի արդյունքը			
Գ. Ա-ում ներառված հանման ենթակա գումարներ դրամով (*)	19. ՀՀ մաքսային սահմանը հատելուց հետո մինչև նշանակման վայրը տեղափոխման ծախսեր..... .....			
	20. Ներմուծումից հետո իրականացված տեխնիկական աջակցության, պահպանման, հավաքման, մոնտաժման և կառուցման վճարներ.....			
	21. Այլ վճարումներ (նշել).....			
	22. Ապրանքների ներմուծման համար վճարվելիք մաքսային վճարումներ.....			
	23. Գ-ի արդյունքը.....			
24 ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԱՐԺԵՔԸ (Ա+Բ- Գ).....				
Դ (*) Եթե գումարները վճարված են ՏԱՐԱԴՐԱՄՈՎ, նշել տարադրամով գումարը և փոխարժեքը՝ յուրաքանչյուր համապատասխան բաղադրամասի և առարկայի համար:				
Դիրքի համարը (Բ և Գ բաժին)		գումար	տարադրամի փոխարժեքը	

Լրացուցիչ թերթ **24 ԱՀ.1**

Մաքսային նշումների համար									
		Ապրանքի N	Ապրանքի N	Ապրանքի N	Ապրանքի N	Ապրանքի N	Ապրանքի N	Ապրանքի N	Ապրանքի N
Ա	11ա								
	11բ								
	12								
Բ	13ա								
	13բ								
	14ա								
	14բ								
	14գ								
	14դ								
	15								
Գ	16								
	17ա								
	17բ								
	17գ								
	17դ								
	18								
Դ	19								
	20								
	21								
	22								
	23								
	24								

Դ (\*) Եթե գումարները վճարված են ՏԱՐԱԴՐԱՄՈՎ, նշել տարադրամով գումարը և

Վոխարժեքը՝ յուրաքանչյուր համապատասխան բաղադրամասի և առարկայի համար:  
 Դիրքի համարը (Բ և Գ բաժին) գումար տարադրամի վոխարժեքը

«Հաստատում եմ»  
 ՀՀ պետական եկամուտների նախարար  
 \_\_\_\_\_ Ա. Մանուկյան  
 \_\_\_\_\_ 2001 թ.

**ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՄԱՆՐԱՍԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ**

**Ձև ՍՀ.2**

1. Վաճառող	Մեթոդ 2-6	Գրանցման համարը
2.(ա) Գնորդ	Մաքսային նշումների համար	
2.(բ) Հայտարարատու	Օրենսդրությամբ սահմանված կարգով, մաքսային մարմինները իրավասու են Ձեր մասին տեղեկություններ ստանալ որևէ երրորդ կազմակերպությունից, կամ տեղեկություններ հայտնել նրանց, որպեսզի ստուգվի դրանց ճշմարտացիությունը: Այդ երրորդ կազմակերպությունները կարող են լինել իրավապահ մարմինները, կամ այլ պետական կառույցներ:	
Ուշադրություն	3. Մատակարարման պայմանները	
ՀՀ օրենսդրության համաձայն հայտարարատուն պատասխանատվություն է կրում բոլոր այն տեղեկությունների համար, որոնք նշված են սույն ձևում և այն փաստաթղթերում, որոնք ներկայացված են նրա կողմից մաքսային արժեքը հաստատելու համար: Մաքսային ձևակերպման ընթացքում հայտարարատուն պարտավոր է ժամանակին մաքսային մարմին ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ հայտարարված մաքսային արժեքը հաստատելու համար:	4. Հաշիվ-ապրանքագրի կամ ապրանքի մատակարարման համար հիմք հանդիսացող այլ փաստաթղթի համարը և ամսաթիվը:	
5. Մաքսային մարմնի կողմից նախկինում կայացված որոշման համարը և ամսաթիվը		
6. Նշեք այն մեթոդը, որով մաքսային արժեքի հաշվարկման համար կարող եք տրամադրել տեղեկատվություն	նշել x նշանով	
(ա) Նույն ապրանքների գործարքի գնի համաձայն	<input type="checkbox"/>	
(բ) Համանման ապրանքների գործարքի գնի համաձայն	<input type="checkbox"/>	
(գ) Ըստ ՀՀ-ում ապրանքի միավորի իրացման գնի հաշվարկման (հանման) մեթոդի	<input type="checkbox"/>	
(դ) Ըստ հաշվարկային արժեքի (գումարման) մեթոդի	<input type="checkbox"/>	
(ե) Պահուստային մեթոդի միջոցով	<input type="checkbox"/>	
7. Նշեք տեղեկատվության աղբյուրները		
8. Հավելյալ թերթերի քանակը	9. Մաքսային նշումների համար	
10.		

Վայրը. Ամսաթիվ. Ստորագրություն.	
---------------------------------------	--

թերթ 2

**Ձև ՍՀ.2**

Մաքսային նշումների համար		Ապրանքի		
		N	N	N
Ա. Հաշվարկման հիմք (մաքսային մարմինների համապատասխան որոշման համարը և ամսաթիվը) N	11(ա) ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՆՇՎԱԾ ՏԱՐԱԴՐԱՄՈՎ (գինը, որը ենթակա է վճարման)..... (բ) ՀՀ ԴՐԱՄՈՎ ..... (Փոխարժեքը.....) (2, 3, 6 մեթոդների համար)			
	11(բ) Ապրանքի միավորի գինը, ըստ որի գնահատվող նույն կամ համանման ապրանքները ՀՀ տարածքում առավել մեծ խմբաքանակներով վաճառվել են գնորդին, որը փոխկապակցված է վաճառողի հետ ՀՀ ԴՐԱՄՈՎ ..... (4, 6 մեթոդների համար)			
	11(գ) Ներմուծվող ապրանքների վերահաշվարկված արժեքը, որը սահմանված է իր բաղկացուցիչ մասերի արժեքի գումարմամբ ՀՀ ԴՐԱՄՈՎ ..... (5, 6 մեթոդների համար)			
Բ. Գնի ճշգրտումներ (+-) դրամով	12. Խմբաքանակի չափի ճշգրտումը (+- ).....			
	13. Կոմերցիոն պայմանի ճշգրտումը (+- ).....			
	14. Ճշգրտումների ընդհանուր գումարը (+- ).....			
	15. Գործարքի (գինը արժեքը) հաշվի առնելով ճշգրտումները (11ա, բ, գ, +14.).....			
Գ. Լրացուցիչ ավելացումներ (+) և պահումներ (-) դրամով	16. Տրանսպորտային ծախսեր (+).....			
	17. Բեռնաթափման, բարձման, փոխաբեռնման արժեքը (+).....			
	18. Ապահովագրություն (+).....			
	19. Կոմիսիոն և այլ միջնորդական ծախսերը կապված ներկրման հետ (+).....			
	20. Եկամուտը, կոմիսիոն և առևտրական գների բարձրացումները կապված ներքին շուկայում վաճառքի հետ (- ).....			

	21. Ներկրվող ապրանքների վերամշակման արժեքը (-).....			
	22. Մաքսային և այլ ներքին վճարումներ (-).....			
	23. Այլ ծախսեր և վճարումներ կապված ներքին շուկայում վաճառքի հետ (-).....			
	24. Գ-ի արդյունքը.....			
	25. ԸՍՏ ՎԵՐՈՂԻՇՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ԿԱԶՄՈՒՄ Է (15+24) ՀՀ ԴՐԱՄՈՎ..... ՏԱՐԱԴՐԱՄՈՎ.....			
Դ. Եթե գումարները վճարված են ՏԱՐԱԴՐԱՄՈՎ, նշել տարադրամով գումարը և փոխարժեքը՝ յուրաքանչյուր համապատասխան բաղադրամասի և առարկայի համար: Դիրքի համարը (Բ և Գ բաժին)                      գումար                      տարադրամի փոխարժեքը				

Լրացուցիչ թերթ

Ձև ԱՀ.2

Մաքսային նշումների համար		Լրացուցիչ թերթ							
		Ապրանքի N	Ապրանքի N	Ապրանքի N	Ապրանքի N	Ապրանքի N	Ապրանքի N	Ապրանքի N	Ապրանքի N
Ա.	11ա								
	11բ								
	11գ								
Բ.	12.								
	13.								
	14.								
	15.								
Գ.	16.								
	17.								
	18.								
	19.								
	20.								
	21.								
	22.								
	23.								
24.									
25.									
Դ. Եթե գումարները վճարված են ՏԱՐԱԴՐԱՄՈՎ, նշել տարադրամով գումարը և փոխարժեքը՝ յուրաքանչյուր համապատասխան բաղադրամասի և առարկայի համար: Դիրքի համարը (Բ և Գ բաժին)                      գումար                      տարադրամի փոխարժեքը									

**Գրանցված է**

Հայաստանի Հանրապետության  
արդարադատության նախարարության կողմից  
2 ապրիլի 2001 թ.  
Պետական գրանցման թիվ 12401072